

օտար ♦♦♦ գիր

Խավիեր Մարիաս
վաղը մարտի դաշտում
հիշիր ինձ



Վնսպես
Երևան

Javier Marías
MAÑANA EN LA BATALLA PIENSA EN MI

Իսպաներենից թարգմանեց
ՌՈՒԶԱՆՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆԸ

Խմբագիր՝
ԱՐՔՄԵՆԻԿ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

Մարիաս Խավիեր

Վաղը մարտի դաշտում հիշիր ինձ: Վեպ/Խավիեր
Մարիաս.– Թարգմ.՝ Ռուզաննա Պետրոսյան:– Եր.:
Անտարես, 2022.– 428 էջ:

«Վաղը մարտի դաշտում հիշիր ինձ» գիրքը վեպ է խաբեության, անհավատարմության, ճակատագրի և դրանից բխող հետևանքների մասին: Գլխավոր հերոսը Վիկտոր Ֆրանսեսն է՝ որոշակի հաջողությունների հասած գրող, որը սիրային ժամադրության ակնկալիքով գալիս է Մարտա Տեյեսի տուն: Մարտան գեղեցիկ կին է, ունի ամուսին և երեխա: Հանդիպման թերևս ամենակարևոր պահին, երբ թվում է՝ խանգարող ոչինչ չկա, տեղի է ունենում ամենաանսպասելին: Մարտան իրեն վատ է զգում, և Վիկտորն ակամայից դառնում է նրա հոգեվարքի վկան: Կինը մեռնում է նրա գրկում՝ ամուսնական մահճում, իսկ փոքրիկը քնած է հարևան սենյակում: Ճակատագիր, թե՞ հանգամանքների անհաջող դասավորություն, և ի՞նչ պիտի անի Վիկտորն այդ դեպքում: Առաջին դեմքից ներկայացվող պատմությունը վերածվում է մտորումների անվերջանալի շղթայի, որտեղ գաղտնիքը բացահայտելու համար ընթերցողը պետք է գտնի առեղծվածային թելը: Վարպետորեն շարադրված վեպի յուրահատուկ և չկրկնվող գրելաոճին միախառնվում են հոգեցունց տեսարաններն ու պատկերները, տպավորություններն ու նկարագրությունները, ենթադրություններն ու մտքի երևակայական թռիչքները:

ISBN 978-9939-76-957-8



Անտարես

© Javier Marías, 1994
© Անտարես, 2022

Նվիրում եմ
Մերսեդես Լոպես-Բայեսպերոսին
Բակիոյի խոսքը լսելու և
ինձ փոխանցելու համար

– Ես գնամ:– Այդքանն էր ասելիքս: Այդ խոսքերը ես արդեն ասել էի այդ տանը, բայց ոչ վերջին անգամ: Ես երբեք ոչ ոքի չեմ ասել «Ես գնում եմ», երբեք չեմ ասել:

Ոչ ոքի մտքով չի կարող անցնել, որ մի օր ինչ-որ մեկը կարող է մեռնել իր գրկում, և որի դեմքն այլևս երբեք չի տեսնելու, բայց հավերժ հիշելու է անունը: Ոչ ոքի մտքով չի կարող անցնել, որ ինչ-որ մեկը կարող է մեռնել ամենաանհարմար պահին, այն էլ՝ ցանկացած պահի, քանզի մտածում ենք, որ նման բան չի կարող պատահել մեր հարազատների հետ: Առավել հաճախ ողջերը փորձում են թաքցնել այլոց մահվան փաստերն ու հանգամանքները, ինչպես նաև մեռնողները, եթե հասցնում են գլխի ընկնել, որ մեռնում են, քանզի հաճախ ամաչում են իրենց հնարավոր մահվան ձևից, տեսքից, նաև պատճառից՝ մահ, որ կարող է վրա հասնել չնարսված ծովամթերքի, քնելուց առաջ վառվող ծխախոտի հրդեհած սավանների և ավելի վատ՝ այրվող մետաքսե վերմակի պատճառով կամ լոգանք ընդունելիս, երբ հանկարծ սայթաքում են լոգարանում, իսկ լողասենյակի դուռը փակ է ներսից, ինչպես նաև կայծակից, որը մի հարվածով գետնին է տապալում հսկա պողոտայի ծառը, որն ընկնելիս կարող է կոտրել կամ ջախջախել անցորդի՝ գուցե ինչ-որ օտարերկրացու գլուխը, կարելի է մեռնել, երբ հագիդ միայն գուլպաներ են, կամ վարսավիրանոցում ես՝ հարդարման մեծ գոգնոցը վրադ, հասարակաց տանը կամ ատամնաբույժի մոտ, կամ ձուկ ուտելիս, երբ մեռնում ես կոկորդիդ կանգնած

փշից, ինչպես երեխան, որի մայրը կողքին չէ, որպեսզի մատը բերանը մտցնելով՝ դուրս քաշի փուշը և փրկի երեխային, կարելի է մեռնել կիսասափրված, մի այտը փրփրապատ և մինչև վերջ անհավասար սափրած մորուքով, եթե, իհարկե, հետո ինչ-որ մեկի «գեղագիտական գույքը» չչարժվի և չսափրի մինչև վերջ՝ չհաշված գոյության ամենամանհարգի և ամենամանհարմար պահերը, որոնց մասին գրեթե երբեք չեն խոսում՝ բացառությամբ պատանեկության տարիների, քանզի դրանից հետո այդպիսի արարքների համար այլևս պատճառ չունեն, չնայած ոմանք շարունակում են նաև հետո, չնայած որ դրանում այլևս ոչ մի հմայք չկա. խոսքը ստորին կամ ամոթալի արարքների մասին է: «Բայց ի՞նչ սարսափելի մահ է»,– կարող են ասել որևէ մեկի մահվան մասին և կարող են ասել քրքջալով. «Բայց ի՞նչ զավեշտալի մահ է»: Բրքջում են, քանզի խոսում են վերջնականապես ջախջախված կամ հեռավոր թշնամու մասին՝ մեկի, որը հեռացել է մեզնից կամ մնացել հեռավոր անցյալում՝ հռոմեացի կայսեր կամ ապուպապի մասին, ավելի ձիշտ՝ գերհզոր մեկի մասին, որի գրոտեսկային մահը դիտարկվում է որպես արդարության, մարդկայնության առհավատչյա, հավանաբար հոգու խորքում այդպիսի մահ կմաղթեինք բոլորին, այդ թվում՝ նաև մեզ: «Ինչպե՛ս են ցնծում այդ մահով, որքա՛ն են ափսոսում, ինչպե՛ս են տոնում»: Մենք երբեմն ծաղրուծանակի ենք ենթարկում այդպիսի մահը, քանզի մեռնողը մեզ լիովին անծանոթ մեկն է, որի մահվան բոթին անխուսափելիորեն տեղեկացել ենք թերթերից: «Խղճո՛ւկ»,– ասում ենք՝ ծիծաղով վերջինիս մահը դիտարկելով որպես սոսկ թատերգություն կամ ներկայացում. պատմությունները, որոնք մեզ պատմում են, և որոնք ընթերցում կամ լսում ենք, մեր կողմից ընկալվում են որպես թատերգություններ,

թվում է՝ միշտ ինչ-որ անիրական բան կա այն ամենում, ինչը պատմում են մեզ, կարծես ոչինչ մինչև վերջ տեղի չի ունենում, նույնիսկ այն, ինչը տեղի է ունենում մեզ հետ, և այն, ինչը մոռանալ չենք ուզում: Նույնիսկ այն, ինչը չենք կարող մոռանալ:

Անիրական ինչ-որ բան կա նաև ինձ հետ կատարվածի մեջ՝ մի բան, որը դեռ կատարվում է կամ գուցե ճիշտ կլիներ բայի մեկ այլ ժամանակաձև օգտագործել, թերևս անկատար անցյալ, այսինքն՝ մի բան, որը պատահել է ինձ հետ, սակայն դեռ չի ավարտվել: Գուցե հիմա, երբ սկսեմ պատմել, նույնիսկ ծիծաղս գա: Չնայած չեմ կարծում, գուցե որովհետև այդ ամենն ինձ համար դեռ հեռավոր անցյալ չէ, իսկ կինը, որը մահացավ, ոչ վաղ անցյալում էր, ոչ գերիզուր մեկն էր, ոչ թշնամի էր, անշուշտ, ոչ էլ կարող եմ ասել՝ անծանոթ էր, չնայած այն պահին, երբ մեռավ իմ գրկում, ես դեռ շատ բան չգիտեի նրա մասին, փոխարենը հիմա ավելին գիտեմ: Իսկական բարեբախտություն էր, որ դեռ չէր հասցրել մերկանալ կամ կիսամերկ էր, դա այն պահն էր, երբ հանում էինք մեկս մյուսի հագուստը, ինչպես սովորաբար լինում է առաջին գիշերը, երբ երկուսն էլ փորձում են ձևացնել՝ իբր չեն նախապատրաստվել դրան կամ ամենևին մտադիր չեն անել այն, ինչ անում են, որպեսզի կարողանան մի կողմ թողնել ամոթը, իսկ հետո արդարանալ, որ պատահածը անխուսափելի մի բան էր, և այդպիսով «մեղքը» գցել իրենց վրայից. մարդիկ հավատում են նախախնամությանն ու բախտին միայն այն ժամանակ, երբ իրենց է հարմար: Երբ ինչ-որ բան լավ չի ավարտվում, կամ երբ ճշվում ենք կամ զղջում, կամ մեզ մեղավոր ենք զգում, բոլորս էլ նախընտրում ենք ասել. «Իմ փնտրածը դա չէր, իմ ուզածը դա չէր», նույն ձևով հիմա ստիպված էի ինքս ասել. «Իմ փնտրածը դա չէր,

իմ ուզածը դա չէր»։ հիմա, երբ գիտեմ, որ նա մեռած է և որ մեռավ այնպիսի անպատեհ ժամի ու իմ գրկում՝ գրեթե անծանոթ գրկի մեջ. մտածում եմ, որ անարդար է, քանզի այդ պահին ես չէի այն մարդը, որը պիտի նրա կողքին լիներ: Բայց եթե խոսեմ, միևնույն է, ոչ ոք չի հավատա՝ մի բան, ինչը, այնուամենայնիվ, այլևս կարևոր չէ. ես պարզապես պատմում եմ իմ պատմությունը, և ինձ համար միևնույն է՝ կլսե՞ն ինձ, թե՞ ոչ: Ինքս էլ նույն բանն եմ ասում. «Իմ փնտրածը դա չէր, իմ ուզածը դա չէր», իսկ նա այլևս երբեք չի կարողանա ասել այդ նույն խոսքերը, ոչ մի դեպքում, ոչ էլ կարող է հերքել ինձ, քանզի վերջում միայն ասաց. «Ա՛խ, Աստվա՛ճ իմ, երեխան»: Իսկ առաջին բանը, որ ասաց՝ սա էր. «Ինձ լավ չեմ զգում, չեմ հասկանում՝ ինչ է կատարվում հետս»: Նկատի ունեմ առաջին բանը, երբ արդեն նրա ննջասենյակում էինք՝ կիսապառկած, կիսամերկ կամ կիսահագնված: Հանկարծ հետ քաշվեց ինձնից, մատներով դիպավ շուրթերիս, կարծես չէր ուզում այդպես միանգամից վերջ դնել մեր համբույրին, ձեռքի մի ժեստով քնքշորեն մի կողմ հրեց ինձ, շրջվեց մյուս կողքի վրա՝ մեջքով դեպի ինձ, իսկ երբ հարցրի, թե ինչ պատահեց, պատասխանեց. «Ինձ լավ չեմ զգում, չեմ հասկանում՝ ինչ է կատարվում հետս»: Այդ պահին տեսա նրա ծոծրակը, որը նախկինում երբեք չէի տեսել, մազերը փոքր-ինչ վեր էին բարձրացել, խառնվել ու քրտնել, չնայած շոգ չէր. քրտնքից փոքր-ինչ գանգարացած կարճ սև մազերը նման էին արյան կիսաչոր շիթերի կամ ցեխոտ բծերի, մեկի ծոծրակի, որը սայթաքել էր լոգարանում, սակայն ընկնելիս հասցրել էր փակել ջրի ծորակը: Ամեն ինչ այնքան արագ եղավ, որ նույնիսկ չհասցրի որևէ բան անել. ոչ բժիշկ կանչել (չնայած ո՞ր բժիշկը գիշերվա ժամը երեքին կարձագանքեր իմ կանչին, հիմա նույնիսկ ճաշի ժամին տներ չեն գնում), ոչ

զգուշացնել որևէ հարևանի (չնայած ո՞ր հարևանին պիտի կանչեի, եթե ոչ ոքի չէի ճանաչում, նախկինում այդ տանը երբեք չէի եղել՝ տուն, որտեղ ես պարզապես հյուր էի, իսկ հետո անմիջապես դարձա խորթ մեկը, նույնիսկ այդ փողոցում չէի եղել, իսկ թաղամասում՝ թերևս մեկ անգամ, շատ ավելի շուտ), ոչ զանգահարել նրա ամուսնուն, բացի ամուսինը լինելուց՝ վերջինս նաև ճամփորդում էր (ես նույնիսկ նրա անուն-ազգանունը չգիտեի), ոչ արթնացնել երեխային (որին մի կերպ էինք քնեցրել), ոչ էլ կարող էի ինքս օգնել, որովհետև լիովին անսպասելի սկսեց իրեն վատ զգալ. սկզբում մտածեցի, կամ մտածեցինք, որ պատճառը թերևս բազմիցս ընդհատված ընթրիքն էր, կամ մտածեցի՝ գուցե մինչև ընթրիքը արդեն ճնշված էր կամ վախենում էր, կամ զղջում էր, այդ երեքը երբեմն դրսևորվում են անհավեսության կամ նույնիսկ լուրջ հիվանդության ձևով, հատկապես երբ զղջումը վրա է հասնում ավելի շուտ, քան այն, ինչը դեռ տեղի չի ունեցել, բայց որի համար արդեն զղջում ենք, երբ այլևս չգիտենք՝ որտեղ է այդ-ն, որտեղ՝ ոչ-ը, որտեղ՝ գուցե-ն, երբ ստիպված ենք կուրորեն գործել՝ մինչև վերջ չհասկանալով, թե ինչ է կատարվում, և չիմանալով, թե ինչ է լինելու հետո, միայն որովհետև ժամանակն անցնում է, վազում է առաջ և շտապեցնում մեզ, և մենք ստիպված ենք ընդունել որոշումներ՝ չնայած չգիտենք, թե ինչ է կատարվում և գործել՝ չնայած չգիտենք, թե ինչպես, և այդ դեպքում մեզ մնում է միայն մեկ բան՝ փորձել կանխատեսել, ինչն ամենաանշնորհակալ գործն է, քանզի կուրորեն գործելն ավելի լավ է, քան պարզապես կանխատեսելը, միայն թե դա չենք հասկանում, փոխարենը միշտ ձգտում ենք դրան և ամեն օր սովորում ապրել դրանով: Նա հանկարծ սկսեց իրեն վատ զգալ՝ նա, ում անունը միայն հիմա եմ համարձակվել արտաբերել՝

Մարտան, Տեյես ազգանունով կինը, որն ասաց, որ գլխապտույտ կամ սրտխառնուք ունի, իսկ ես հարցրի նրան. «Գլխապտո՞ւյտ, թե՞ սրտխառնուք»: «Զգիտեմ: Սարսափելի սրտխառնուք ունեմ, ամբողջ մարմինս ցավում է: Զգում եմ, որ մեռնում եմ»: Այն մարմինը, որին քիչ առաջ ձեռքերս դիպչում էին՝ ձեռքեր, որոնք հասնում են ամեն տեղ, որոնք սեղմում են կամ շոյում, կամ շոշափում, բայց նաև հարվածում (օ՛, դիտմամբ չարեցի, ականա ստացվեց, ինքս էլ չհասկացա ինչպես), դրանք երբեմն այն ձեռքերի ականա ժեստերն են, որոնք շոշափում են ամբողջ մարմինը, որոնք դեռ չգիտեն՝ հաճելի՞ են այդ հպումներն այն մարմնին, որը հանկարծ սրտխառնուք է զգում՝ մի բան, որն ամենատարածվածն է բոլոր ցավերի մեջ, ամբողջ մարմինը, ինչպես նա ասաց, վերջին բանը, երբ ասաց. «Զգում եմ, որ մեռնում եմ», գուցե բառացիորեն այդպես չասաց, քանզի վերջինս հնչեց իբրև քարացած արտահայտություն: Նա չէր ստածում, որ մեռնելու է, ես՝ նույնպես, ավելին՝ հետո շարունակեց. «Զեմ հասկանում՝ ինչ է կատարվում ինձ հետ»: Շարունակեցի պնդել, քանզի հարցնելը մեզ ազատում է գործելու անհրաժեշտությունից և ոչ միայն հարցնելը, այլև խոսելն ու պատմելը, որոնք համբույրներից և հարվածներից խուսափելու ինչ-որ ձև են, նաև ճար գտնելուց և սպասելուց խուսափելու հնար, բայց ես ի՞նչ կարող էի անել, հատկապես սկզբում, երբ թվում էր, թե այդ ամենն անցողիկ է, և լինելու էր, և չէր լինելու. «Ուզո՞ւմ ես փսխել»: Նա բառացի չպատասխանեց, կիսաչոր արյան կամ ցեխի բծեր հիշեցնող մազերով ծոծրակով բացասական պատասխան տվեց. թվաց՝ հազիվ էր խոսում: Ես վեր կացա անկողնուց, շրջվեցի նրա կողմը, ծնկի եկա, որպեսզի դեմքը տեսնեմ և ձեռքս դրեցի ուսին (այդպես բժիշկներն են մխիթարում հիվանդներին):

Այդ պահին նրա աչքերը փակ էին, կոպերը՝ սեղմված, որքա՞ն երկար էին թարթիչները. գիշերալամպի լույսը, որը դեռ չէինք անջատել, կարծես խանգարում էր նրան (մտադիր էի անջատել լույսը, մինչև նրա վատանալը, բայց չհասցրի, որովհետև ուզում էի տեսնել այն մարմինը, որը դեռ նոր էր ինձ համար, որը վստահաբար ինձ դուր էր գալու, ահա թե ինչու լույսը չէի անջատել): Լույսը միացրած էի թողել, և ուրեմն հիմա այն կարող էր օգնել մեզ վերահսկել նրա վիճակը՝ լինել հիվանդություն, ընկճախտ, վախ, թե զղջում: «Գուցե բժիշկ կանչեմ», – ասացի ես և իսկույն մտածեցի մշտապես ուշացող շտապօգնությունների ու նրանց անհնարին արձագանքների մասին: Մարտան կրկին գլխով բացասական շարժում արեց: «Որտե՞ղդ է ցավում», – հարցրի ես, իսկ նա չուզելով, բայց և այնպես ցույց տվեց ինչ-որ անորոշ տեղ՝ կրծքի ու ստամոքսի հատվածը, նաև դրանից ներքև գտնվող մասը, իրականում ամբողջ մարմինը՝ բացի գլխից ու ոտքերից: Որովայնը բաց էր, կուրծքը՝ կիսաբաց, կրծկալը դեռ հագին էր (չնայած ամրակալը բաց էր). առանց ուսաթելերի կրծկալ էր, ձիշտ այնպիսին, ինչպիսին կանայք կրում են ամռանը բիկինիի հետ, չափսը մի քիչ փոքր էր, երևի այդ երեկո հենց այդպիսի կրծկալ էր հագել, քանզի սպասել էր ինձ, ամեն բան նախապես մտածել էր, չնայած այդպիսի տպավորություն չէր թողնում, բոլոր մանրուքները մանրամասն մտածված էին, մինչև այն պահը, երբ երկուսով հայտնվելու էինք այդ «ամուսնական» մահճում (ես գիտեմ, որ կանայք դիտմամբ մեկ համար փոքր կրծկալ են կրում, որպեսզի դրանով ավելի ընդգծեն կուրծքը): Ես արձակել էի կրծկալի ամրակալը, բայց այն չէր ընկել Մարտայի վրայից, քանզի վերջինս սեփական թևերով գուցե ականա, ինքն էլ չցանկանալով ամուր գրկել էր ցավից

գալարվող մարմինը: «Ցավն անցնում է»: «Չգիտեմ, չեմ կարծում»,– ասաց Մարտա Տելյեսը՝ արդեն ոչ թե ցածր, այլ ցավից ու հուսահատությունից նվաղած ձայնով, քանզի իրականում ինքս էլ չգիտեմ՝ արդյոք ցավ զգում էր, թե՞ ոչ: «Մի քիչ սպասիր, հազիվ եմ խոսում»,– հավելեց նա (հիվանդությունը ծուլացնում է մեզ), և այնուամենայնիվ, էլի ինչ–որ բան ասաց. այնքան վատ չէր, որ պեսզի մոռանար ներկայությունս, կամ գուցե պարզապես սովոր էր ցանկացած իրավիճակում նույնիսկ մեռնելիս այլոց մասին մտածել. վաղուց չէր, որ ճանաչում էի նրան, բայց և այնպես ուշադիր մարդու տպավորություն էր թողել (միայն թե այդ պահին երկուսս էլ չգիտեինք, որ մեռնում էր): «Խեղճս,– ասաց նա,– նման ելք չէիր կանխատեսել, չէ՞, ի՞նչ սարսափելի գիշեր է»: Ես ընդհանրապես ոչ մի ելք չէի կանխատեսել, ավելի ճիշտ՝ միայն այն, ինչ Մարտան: Մինչև այդ պահը գիշերը ամենևին էլ սարսափելի չէր, եթե չասեմ՝ փոքր–ինչ ձանձրալի, այնպես որ չգիտեմ, թե նա դրանով ինչ նկատի ուներ, չգիտեի՝ կանխատեսե՞լ էր արդյոք, որ իրեն վատ էր զգալու կամ գուցե նկատի ուներ այն, որ ստիպված էինք եղել չափից շատ սպասել երեխայի պատճառով, որը համառորեն չէր քնում: Վեր կացա տեղիցս, նորից մտամոլոր քայլեցի մահճակալի կողքով և վերադարձա պառկածս տեղը՝ նրա կողքին՝ ձախ կողմը (աչքիս առաջ կրկին նրա՝ ցրտից ակոսված շերտերի նման սև մազերով անշարժ ծոծրակն էր). «Գուցե ավելի լավ կլինի սպասել և հարցախեղդ չանել նրան, ժամանակ տալ, հանգիստ թողնել, տեսնել, թե ինչ է կատարվում նրա հետ, չստիպել պատասխանել հարցերի, անընդհատ չհարցնել՝ դեպի լավն է գնում, թե՞ վատը, որովհետև երբ կենտրոնանում ես հիվանդության վրա, այն ավելի է սրվում»: Զննեցի սենյակի պատերը. մտնելիս շուրջս չէի նայել, քանզի

հայացքս միայն այն կնոջ կողմն էր, որը սկզբում անհանգիստ կամ երկչոտ էր, իսկ հիմա՝ վատառողջ, մեկը, որը, ձեռքիցս բռնած, ինձ ուղեկցել էր այդ սենյակ: Մահճակալի դիմաց մեծ հայելի էր, կարծես հյուրանոցի սենյակում լինելիք. երևի ամուսինները սիրել են մինչև փողոց դուրս գալը կամ անկողին մտնելը նայել հայելու մեջ: Փոխարենը մնացած ամեն ինչով երկու անձի համար նախատեսված սովորական ննջասենյակ էր (Մարտան հենց սկզբից առանց մտածելու սահեց անկողնու այն կողմը, որտեղ քնում և արթնանում էր ամեն առավոտ), իմ կողքին՝ փոքրիկ զարդասեղանին, ամուսնուց մնացած «հետքերն» էին՝ հաշվիչ, նամակներ բացելու փոքրիկ ածելի, դիմակ, որով օվկիանոսի ուժեղ լույսից պաշտպանվելու համար ինքնաթիռով թռչելիս փակում են աչքերը, մետաղադրամներ, կեղտոտ մոխրաման, էլեկտրական զարթուցիչ, մի տուփ ծխախոտ, որտեղ միայն մեկ գլանակ էր, «Լյու Վեն» ապրանքանիշի չափից դուրս առնական բույրով օծանելիքի սրվակ, որը նվիրել էին, գուցե հենց Մարտան նրա վերջին ծննդյան օրվա առթիվ, նաև երկու գիրք՝ նույնպես նվիրված (գուցեն նվիրված չէին, չնայած ինքս դրանք չէի գնի), «Ռեդոքսոն» ապրանքանիշի հակաքրտնքային սփրեյ, որի սրվակը դատարկ էր, սակայն մինչև մեկնելը ամուսինը չէր հասցրել մի կողմ նետել, հեռուստածրագիր, որն այսօր աչքի չէր անցկացնելու, քանզի ճամփորդում էր: Հեռուստացույցը մահճակալի ոտքերի մոտ էր՝ հայելու կողքին (տնվորները երևի հարմարավետություն սիրող մարդիկ էին), մի պահ մտածեցի միացնել հեռուստացույցը, սակայն հեռակառավարման վահանակը Մարտայի կողմի սեղանիկի վրա էր, այնպես որ ստիպված էի նորից անցնել մահճակալի մյուս կողմով կամ գուցե ձեռքս նրա գլխի վրայով անցկացնելով՝ առաջ ձգվել՝ դրանով ավելի

մեծացնելով նրա վախն ու ընկճախտը: Այնուամենայնիվ, ձեռքս առաջ ձգեցի և վերցրի վահանակը, Մարտան նույնիսկ գլխի չընկավ, որ վերնաշապիկիս թևքի եզրը դիպավ մազերին: Ձախ պատին ինձ քաջածանոթ նկարիչ Բարտոլոմեո Վենետոյի կտավներից մեկի կրկնօրինակն էր (նրա կտավները ցուցադրվում էին Ֆրանկֆուրտում), ցածրաճաշակ նկար էր, որում պատկերված էր մի կին՝ բավական տափակ ու մերկ կրծքով, գլխին՝ հյուսած դափնեպսակ, որի տակից երևում էին գանգուրները, ձեռքերից մեկը, որում տարբեր ծաղիկներից հավաքած փունջ էր, ձգված էր դեպի վեր, իսկ ճակատին երկրաչափական պատկերով շղթա էր: Աջ կողմում ներկառուցված պահարաններ էին՝ սպիտակ, ինչպես պատերը. ներսում հավանաբար ամուսնու այն շորերն էին, որոնք նա հետը չէր վերցրել, այսինքն՝ գրեթե ամբողջ հագուստը, որովհետև դեռ ընթրելիս Մարտան ասաց, որ ամուսինը կարճ ժամանակով էր մեկնել Լոնդոն: Նաև երկու աթոռ, որոնց վրա նույնպես հագուստ կար՝ գուցե կեղտոտ, գուցե նոր լվացած, բայց դեռևս չարդուկված, Մարտայի կողքին դրված գիշերալամպի լույսը թույլ չէր տալիս տեղը տեղին զննել դրանք: Աթոռներից մեկի վրա տղամարդու հագուստ էր. աթոռի թիկնակին՝ տղամարդու պիջակ, դեռևս գոտին վրան կապած և բաց շղթայով տաբատ (ինչպես սովորաբար լինում է նոր հանած տաբատի դեպքում), նաև կոճակներն արձակած բաց գույնի մի քանի վերնաշապիկ: Ամուսինը դեռ այդ առավոտ արթնացել էր այդ սենյակում, գլուխը բարձրացրել նույն բարձից, որի վրա այժմ ինքս էի հենված, հավանաբար այսօր որոշել էր մեկ այլ տաբատ հագնել, գուցե որովհետև Մարտան հրաժարվել էր դրանք արդուկել: Հագուստի վրա դեռ մնացել էր նրա օձանելիքի բույրը: Մյուս աթոռի վրա կանացի

հագուստ էր: Տեսա Մարտա Տեյեսի մուգ զուգագուլպաներն ու երկու կիսաշրջազգեստը, հավանաբար ոչ մի կերպ չէր կարողացել կողմնորոշվել՝ ինչ հագնել ժամադրությանը (ես նման խնդիր չունեի, նախ՝ որովհետև չգիտեի, թե ինչով էր ավարտվելու մեր հանդիպումը, և բացի այդ՝ զգեստապահարանս բավական աղքատիկ էր): Կիսաշրջազգեստը, որն ի վերջո հագել էր, ճնշված էր, քանզի Մարտան պառկել էր կուչ եկած, բռունցքները սեղմած (բուֆ մատները դեպի ներս), ոտքերը լարված էին, որովհետև այդկերպ փորձում էր մեղմել, դադարեցնել որովայնի ու կրծքի ցավը: Կիսաշրջազգեստի ճնշված փեշը ցցվել էր վեր՝ մերկացնելով ազդրը. ինձ թվաց, ուր որ է ներքև ձգելով՝ կուղղեմ փեշը, որպեսզի ծածկեմ մերկ ազդրը, սակայն ինձ բռնացրի այն մտքի վրա, որ դուր էր գալիս նայել նրա մարմնին, և բացի այդ՝ մտածեցի, որ եթե Մարտան չլավանա, ապա հազիվ թե երբևէ նորից տեսնեմ նրան, և ընդհանրապես նա հազիվ թե անհանգստանար ճնշված փեշի համար, իսկ գուցե նրա կիսաշրջազգեստը ճնշվել էր մինչև մեր ննջասենյակ մտնելը. առաջին գիշերը ուշադրություն չեն դարձնում հագուստին, որը հանում են, այլ միայն՝ դեռևս անձանոթ մարմնին: Գուցե հենց այդ պատճառով դեռ չէր արդուկել աթոռներին զցած շորերը, գիտեր, որ հաջորդ օրը այսպես թե այնպես ստիպված էր լինելու արդուկել այն կիսաշրջազգեստը, որն ընտրելու էր այդ երեկո ինձ հանդիպելու համար (չնայած դեռ չգիտեի՝ հատկապես ո՞ր մեկը). նման դեպքերում ամեն ինչ ճնշվում է, կեղտոտվում կամ տձևվում, գուցեև անապիտան դառնում:

Մինչև հեռուստացույցը միացնելը իջեցրի ձայնը. իմ սրտով էր, էկրանին «լուռ ու համր» կադր էր, ու թեև սենյակը մի ակնթարթում լուսավորվեց, այնուամենայնիվ,

Մարտան գլխի չընկավ: Էկրանին Ֆրեդերիկ Մարտինի ֆիլմերից մեկի դրվագն էր. ենթագրերով հին ֆիլմերը ցուցադրում էին գիշերվա այդ ժամին: Անցա բոլոր հեռուստաալիքներով և կրկին կանգ առա սև ու սպիտակ ֆիլմի վրա՝ զննելու Ֆրեդի հիմար դեմքը: Եվ հենց այդ րոպեին հանկարծ մտքովս անցավ (չնայած երբեք գլխի չես ընկնում, թե հատկապես որ պահին մտքովդ անցավ): «Ես ի՞նչ եմ անում այստեղ: Ես ինչ-որ մեկի տանն եմ, որը լիովին օտար է ինձ, ինչ-որ մեկի ննջասենյակում, որին երբեք չեմ տեսել, որի միայն անունը գիտեմ՝ անուն, որը երեկոյի ընթացքում Մարտան լիովին բնական ու անթաքույց ձևով քանիցս հնչեցրեց: Սա նաև նրա կնոջ ննջասենյակն է, ահա թե ինչու էի այնտեղ նրա հետ՝ հսկելով վերջինիս վիճակն այն բանից հետո, երբ արդեն սկսել էի հանել շորերը և շոյել նրան, թեև քիչ ժամանակ է, ինչ ծանոթ ենք, ընդամենը երկու շաբաթ, կյանքումս երրորդ անգամ եմ տեսնում նրան: Այդ ամուսինը մեր ընթրիքի ընթացքում մի քանի անգամ զանգահարեց, որպեսզի ասի, որ բարեհաջող հասել է Լոնդոն, որ արդեն հրաշալի ընթրել է «Բոմբեյ-Բրասերիում» և որ մտադիր է քնել հյուրանոցի իր համարում, քանզի հաջորդ օրը պիտի աշխատի: Միայն թե Մարտան չասաց նրան, որ ես այնտեղ էի՝ ընթրիքի: Դա ինձ վստահություն ներշնչեց, որ վերջինս սովորական ընթրիք չէր, չնայած այդ ժամանակ երեխան դեռ քնած չէր: Ամուսինը, անշուշտ, հարցրեց երեխայի մասին, և կինը պատասխանեց, որ պատրաստվում է քնեցնել նրան, ամուսինը երևի ասում էր. «Փոխանցիր լսափողը երեխային, ուզում եմ բարի գիշեր մաղթել նրան», որովհետև Մարտան պատասխանեց. «Ավելի լավ կլինի չխոսես, առանց այն էլ ամբողջ օրը հանգիստ չունի, իսկ քեզ հետ խոսելուց հետո ավելի կաշխուժանա և այլևս քնեցնել չի լինի»:

Ըստ իս՝ դա անհեթեթություն էր, որովհետև երեխան, որը, ըստ մայրիկի, գրեթե երկու տարեկան էր, այնքան անհասկանալի ու գրեթե անընկալելի էր խոսում, որ Մարտան ստիպված էր լինում ոչ միայն խոսեցնել, այլև «թարգմանել» նրան. մայրերն աշխարհում առաջին խոսեցնողներն ու թարգմանիչներն են, որոնք մեկնաբանում, իսկ հետո ձևակերպում են ոչ միայն երեխայի թոթով լեզվով հնչող ֆրազները, այլև ժեստերը, շարժումն ու լացի տարբեր երանգները, նույնիսկ այն դեպքում, երբ այդ լացը հողաբաշխ չէ, իսկ արտաբերված հնչյունները հավասարազոր չեն բառերին, կամ բացառում են դրանք, կամ խանգարում դրանց: Գուցե հայրը նույնպես հասկանում էր երեխային, և այդ էր պատճառը, որ ուզում էր հեռախոսով խոսել երեխայի հետ, որը չնայած դժվարությամբ, սակայն ամբողջ ժամանակ ծծակը բերանում խոսում էր: Երբ Մարտան մի քանի թուփով գնաց խոհանոց, ես երեխայի հետ մենակ մնաց նույն սենյակում, որը նույնպես որպես ճաշասենյակ էր ծառայում (ես նստած էի սեղանի շուրջը՝ անձեռոցիկը ծնկներիս, իսկ երեխան՝ բազմոցին՝ խաղալիք նապաստակը ձեռքին, երկուսս էլ նայում էինք լուսարձակող էկրանին. նա՝ իր դիմաց, ես՝ աչքի պոչով), ասացի նրան. «Երբ ծծակով ես, քեզ չեմ հասկանում»: Մի պահ մանչուկը ծծակը հնազանդորեն հանեց բերանից և պահեց մի ձեռքին, իսկ մյուսին դեռ խաղալիք նապաստակն էր և գրեթե «ճարտասանորեն» կրկնեց այն, ինչը քիչ առաջ իբր ասում էր, սակայն «փորձը տապալվեց»: Փաստը, որ Մարտա Տեյեսը թույլ չտվեց, որ երեխան մոտենա հեռախոսին, ինձ ստիպեց ավելի վստահ լինել, որ մտքին ինչ-որ բան կա, այլապես երեխայի խոսքերից, նույնիսկ եթե դրանք գրեթե անհասկանալի էին, այնուամենայնիվ, հայրը կկռահեր, որ տանն ընթրող տղամարդ կա: Հանկարծ գլխի ընկա, որ

երեխան արտաբերում էր բառերի միայն վերջին վանկերը, այն էլ՝ ոչ ամբողջովին, օրինակ՝ բեխեր ասելու փոխարեն ասում էր՝ *-խեր*, փողկապի փոխարեն՝ *-կապ*, ծծակի՝ *-ակ*, կոտլետի՝ *-լետ*, հատկապես այն պահին, երբ էկրանին հայտնվեց *բեխերով* մի տղամարդ, իսկ ընթրիքին Մարտան ինձ *կոտլետ* մատուցեց՝ ներկայացնելով որպես իռլանդական սթեյք, նույնիսկ իմանալով հանդերձ, միևնույն է, դժվար էր այդ երեխայի լեզուն հասկանալ, բայց գուցե հայրը սովոր էր վերծանել նրա թոթով լեզուն, որով այդ տանը խոսում էր միայն մեկը, և որը շուտով մոռանալու էր իրեն: Մանչուկը դեռ նոր-նոր էր ինչ-որ բառեր արտաբերում, հետևաբար դժվար թե կարողանար ամբողջական նախադասություն ասել, հատկապես շատ էր օգտագործում գոյականներն ու որոշ ածականներ, թերևս այդ էր պատճառը, որ ինչ էլ ասեր՝ հնչում էր բացականչության ձևով: Մինչ մենք ընթրում կամ չէինք ընթրում, նա կտրականապես հրաժարվում էր քնել, իսկ ես ստիպված էի լինում սպասել Մարտային, մինչև կվերադառնար սեղանի մոտ խոհանոցից կամ երեխային խնամելուց: Մայրը նրա համար հեռուտացուցով մուլտֆիլմ էր միացրել (ինձ թվաց՝ տանը միայն մեկ հեռուստացույց կա), որպեսզի էկրանի լույսերը ննջեցնեն նրան: Միայն թե մանչուկն ակտիվ էր, հրաժարվում էր պառկել, չնայած կյանքի փորձի լիակատար բացակայությանը, նա ավելին գիտեր, քան ես, և հսկում էր մորն ու տան հյուրին, որին նախկինում երբեք տանը չէր տեսել՝ պահպանելով իր հորը պատկանող տեղը: Կային պահեր, երբ ուզում էի վեր կենալ ու գնալ, ես ինձ ավելի շատ խաբեբա էի զգում, քան հյուր, իսկ այդ զգացումն ավելի ու ավելի էր ուժգնանում այն համոզմունքից, որ մեր ընթրիքը պարզապես ընթրիք չէր, և երեխան կատվի պես բնագրաբար զգում էր փորձելով

կանխել այն իր ներկայությանը. քունն ահավոր տանում էր, բայց դեռ պայքարում էր, բազմոցին հանգիստ նստած ինչ-որ մուլտֆիլմ էր նայում, որից թեև բան չէր հասկանում, բայց ճանաչում էր որոշ կերպարների, որովհետև մերթընդմերթ մատնացույց էր անում էկրանն ու ծծակը բերանին փորձում վերարտադրել տեսածը. «Տիտին» կամ «Իտան», և մայրը մի վայրկյան մոռանում էր ինձ, որպեսզի նրան գլխով անի և թարգմանի կամ հաստատի ասածը, որպեսզի նրա թոթովանքից և քաղցրահնչյուն խոսքերից և ոչ մեկը անտեսված կամ անարձագանք չմնա. «Հա, կյանքս, Տինտինն ու կապիտանը»: Տինտինի մասին կարդացել էի փոքր ժամանակ ինչ-որ հաստափոր գրքում, իսկ այսօրվա երեխաները նրան տեսնում էին շարժման մեջ և լսում, թե ինչպես է նա ծիծաղելի ձայնով խոսում. ահա թե ինչու էի ժամանակ առ ժամանակ ակամայից շեղվում մեր կցկտուր գրույցից և ընդհատվող ընթրիքից (ախր ես ոչ միայն ճանաչում էի այդ կերպարներին, այլև հիշում էի նրանց արկածները սև կղզում և սեղանի շուրջը նստած անկախ ինձնից հետևում էի էկրանին): Երեխայի՝ չքնելու համառ դժկամությունից վերջնականապես համոզվեցի, որ ինչ-որ բան այն չի լինելու (եթե, իհարկե, նա ի վերջո քներ, և եթե ես ցանկանայի): Այն, թե երեխան ինչպես էր բնագրաբար հետևում և խանդում մեզ, շատ ավելի մատնեց նրա մորը, քան լոնդոնյան զանգի մասին լռությունը (լռության պատճառն իմ ներկայությունն էր), պարզապես տնային ընթրիքի համար նրա մայրը չափից շատ էր զարդարվել, շպարվել և շիկնել (իսկ գուցե նա ավելի՞ն գիտեր): Երեխան վախենում էր, իսկ վախը մատնում է մարդուն, հրահրում, այդ թվում և վախեցնողին, դա նախազգուշացում է մի բանի, որը դեռ չի եղել, ստիպում է, որ կատարվի, կասկածները խթան են դառնում,

որպեսզի լինի այն, ինչը կարող էր և չլինել, հույսն ու սպասումները լցնում են արդեն իսկ եղած ու խորացող դատարկությունները. եթե ուզում ենք ազատվել այդ վախից, ապա ինչ-որ բան ի վերջո պիտի լինի, լավագույն բանը՝ թույլ տալ, որպեսզի իրականանա այն, ինչից ամենաշատն ենք վախենում: Երեխան իր չքնելով մեղադրում էր մորը, մայրն իր համբերության համար մեղադրում էր ինքն իրեն («Ավելի լավ է չայնդել,– հավանաբար հենց սկզբից մտածել էր նա,– երբ երեխան կամակորոպոյուն է անում, վերջ»), այդ ամենն ինչ-որ իմաստով զրկում էր մեզ սեթևեթանքի հաճույքից՝ առաջին գիշերվա սեթևեթանքից, որպեսզի հետո ասեինք կամ մտածեինք, որ ամեն ինչ պատահաբար է եղել, որ ես դա չէի ուզում, և նա դա չէր ուզում: Ես նույնպես մեղադրում էի ինքս ինձ և ոչ միայն նրա համար, որ երեխան չէր հանձնվում, այլև իմ հանդեպ նրա վերաբերմունքի և նայվածքի համար. չեղավ մի պահ, որ ինձ շատ մոտ գար, հակառակը, ինձ նայում էր և՛ կասկածանքով, և՛ վստահությամբ, դա հատկապես զգացվում էր նրա կտրուկ և գրեթե միշտ լիովին անհասկանալի բացականչություններից ու բամբ ձայնից, որը հեջ սազական չէր նրա չափերին: Ինձ քիչ բան ցույց տվեց, թույլ չտվեց նույնիսկ իր նապաստակին դիպչեմ: «Երեխան ճիշտ է և ճիշտ է անում,– մտածեցի ես,– որովհետև հենց քնի, ես մի պահ, բայց միայն մի պահ կզբաղեցնեմ իր հոր տեղը: Նա դա զգում է և ուզում է պաշտպանել այդ տեղը, որտեղ ապահով է նաև իր համար, բայց քանի որ նա դեռ կյանքի փորձ չունի, շատ բան չգիտի, ուստի իր թափանցիկ վախով ճանապարհ է հարթում ինձ համար՝ հասկացնելով այն, ինչն այլ կերպ ես չէի հասկանա, ու թեև շատ բան չգիտի, բայց ինձնից լավ է ճանաչում իր մորը, որովհետև մայրը նրա միակ ճանաչած աշխարհն է և բնավ առեղծված չէ նրա

համար: Նրա շնորհիվ ես հասկացա, որ եթե ուզեմ, կարող եմ վճռական գործել»: Քունն աստիճանաբար հաղթեց նրան. գլուխը կախեց և ի վերջո փռվեց բազմոցին (փոքրիկ մարմին՝ հսկայական բազմոցին, կարծես լուցկու տուփի միջի մրջյուն լիներ, բայց շարժվող)՝ դեմքով բարձին հենված, ծծակը բերանին՝ իբրև իր փոքր տարիքի առհավատչյա, քնած կամ քնող մարդու դիրքով՝ ոտքերն իրար սեղմած, բայց աչքերը չռած, քանզի իրեն թույլ չէր տա գոնե մի պահ փակել, մուլտֆիլմ էր նայում, իսկ մայրը երբեմն-երբեմն աթոռից ձգվում էր նրա կողմը՝ տեսնելու՝ արդյոք որդին վերջապես քնել է, ինչպես ինքն էր ուզում. խեղճն ուզում էր մի պահ չտեսնել նրան, նույնիսկ եթե երեխան իր կյանքն էր, խեղճն ուզում էր մի պահ ինձ հետ մենակ մնալ, ուրիշ ոչինչ, ընդամենը մի պահ (միայն հիմա էի ես նրան «խեղճ» անվանում, այն ժամանակ մտքովս էլ չէր անցնում, բայց երևի պիտի անցներ): Ես դրա հետ կապված ոչ հարց էի տալիս, ոչ որևէ մեկնաբանություն անում, որովհետև չէի ուզում մտածեր, որ անհամբեր եմ կամ անտակտ ու անհանդուրժող, և բացի այդ, ամեն անգամ նրա կողմը շրջվելուց հետո ամենաբնական տոնով ինձ ասում էր. «Վայ, աչքերը դեռ բաց են»: Ամեն ինչ որոշում էր երեխայի ներկայությունը, թեև նա լիովին հանգիստ էր: Հանգիստ երեխա էր, ուրախ, գրեթե չէր ձանձրացնում, բայց ինչ որ չէր ուզում մենակ թողնել մեզ, չէր ուզում անհետանալ այդտեղից և իր սենյակ գնալ, չէր ուզում դուրս մնալ մոր տեսադաշտից, որը հիմա պառկած էր նույն դիրքով, ինչ հսկա բազմոցին քնի դեմ պայքարող որդին, մինչդեռ մայրը պայքարում էր ցավի, վախի, ծնշման կամ զղջման դեմ, բայց որը փոքրիկ չէր երևում իր ամուսնական մահճում, ոչ էլ մենակ էր, այլ ինձ հետ՝ մեկի, որը հեռակառավարման վահանակը ձեռքին չգիտեր ինչ անել: «Ուզո՞ւմ

ես գնամ»,– հարցրի ես: «Ոչ, մի քիչ էլ սպասիր, հիմա կանցնի, ինձ մենակ մի թող»,– պատասխանեց Մարտա Տեյեսը և գլուխը շրջեց իմ կողմը, ավելի ճիշտ՝ փորձեց շրջել, բայց չկարողացավ տեսնել դեմքս, աչքի առաջ միացրած հեռուստացույցն էր՝ Ֆրեդ Մաքմուրեյի հիմար դեմքը, որը նմանեցնում էի նրա բացակայող ամուսնու դեմքին, մինչ մտածում էի նրա և տեղի ունեցածի կամ չունեցածի մասին, բայց որը պիտի տեղի ունենար: Ինչո՞ւ հիմա չգանգել նրան, գուցե նա քնած չէ՞ այնտեղ՝ Լոնդոնում, ի՞նչ թեթևություն կզգայի, եթե հիմա հեռախոսի զանգը հնչեր, կինը վերցնե՞ր լսափողն ու իր նվաղուն ձայնով բացատրեր ամուսնուն, որ իրեն շատ վատ է զգում և չի հասկանում, թե ինչ է կատարվում իր հետ: Նույնիսկ հեռվից նա իր վրա պատասխանատվություն կվերցնե, և ես այլևս վկա չեի լինի (թեև վկային չեն մեղսագրում, նա միայն տեսնում է), նա կարող էր բժիշկ կանչել կամ հարևաններից մեկին (նա ճանաչում էր նրանց, իր հարևաններն էին, ոչ թե իմը), կամ քրոջը, կամ հարսին, և նրանք կեսգիշերին քնաթաթախ վեր կթռչեին ու կշտապեին իր տուն՝ հիվանդ կնոջն օգնելու: Այդ ընթացքում ես կհեռանայի, կվերադառնայի մի ուրիշ երեկո, եթե առիթ լիներ, երբ այլ հանգամանքներ ու հետևանքներ չէին լինի, կարող էի այցելել հաջորդ օրը՝ նույն ժամին, ուշ, երբ վստահ կլինեի, որ երեխան արդեն քնած է: Ես չեի կարող, բայց ամուսինը կարող էր անել այդ ամենը: «Կուզե՞ս զանգենք ամուսնուդ»,– հարցրի Մարտային:– Գուցե հանգստանա՞ս, եթե իմանա, որ քեզ վատ ես զգում»: Մենք տանել չենք կարողանում, երբ մեր սիրելիները չգիտեն մեր ցավի մասին, երբ գիտեն, թե երջանիկ ենք, երբ այլևս այդպես չէ, ամեն մեկիս կյանքում չորս կամ հինգ հոգի կան, ովքեր պիտի իսկույն իմանան, եթե մեզ ինչ-որ բան է պատահել, մեզ համար

անտանելի է միտքը, որ մեր մերձավորները գիտեն մեր վշտերի մասին, որ շարունակում են հավատալ նրան, ինչն այլևս չկա, ոչ մի ավել րոպե, որ ամուսնացած ենք, մինչդեռ արդեն այրի ենք կամ որ ծնողներ ունենք, մինչդեռ որբացել ենք, որ ընկեր ունենք, մինչդեռ մեզ լքել են, կամ առողջ ենք, մինչդեռ հիվանդ ենք, որ ողջ ենք, մինչդեռ մեռած ենք, կամ մեռած են համարում, մինչդեռ ողջ ենք: Բայց այդ գիշերը տարօրինակ էր հատկապես Մարտա Տելյեսի համար, վստահաբար ամենատարօրինակը իր ամբողջ գոյության ընթացքում: Մարտան փոքր-ինչ շրջեց գլուխը, և մի պահ ես տեսա նրա դեմքը, ինչպես նա՝ իմը. երկար ժամանակ տեսնում էի միայն նրա ծոծրակը, որը գնալով քրտնում էր, մգանում, քրտնքից աղվամազերը թելերի պես կաչում էին իրար, ասես ցեխոտ էին, և առանց բծերի մերկ մեջքը: Երբ շրջվեց, ինձ թվաց՝ աչքերը չէին տեսնում, երկար թարթիչները խճճվելով գրեթե ծածկել էին դրանք, գուցե աչքերից հորդող զարմանքն էր պատճառը, որ հասկացա, որ որոշ ժամանակ մոռացել էր ինձ և չէր ճանաչում, գուցե իմ հարցն էր պատճառը կամ արածս մեկնաբանությունը, կամ գուցե այն, որ երբեք չէր զգացել այն, ինչ հիմա էր զգում: Ենթադրում եմ՝ հոգեվարքի մեջ էր, բայց ես գլխի չէի ընկնում. կյանքում մեկ անգամ ես հոգեվարք ապրում, հետևաբար փորձ չունես: «Գի՞ժ ես, – ասաց նա, – ո՞նց զանգեմ, նա կսպանի ինձ»: Երբ Մարտան շրջվեց, կրծկալը, որը նա կամա թե ականա սեղմում էր թևերով կամ թևատակերով, ընկավ բարձին, կուրծքը բացվեց, բայց նա ոչինչ չարեց ծածկելու համար. ենթադրում եմ՝ հոգեվարքի մեջ էր, իսկ ես գլխի չէի ընկնում: Ապա ցույց տալով, որ հիշում է ինձ, ավելացրեց. «Վայ, հեռուստացույց ես միացրել, խեղճս, երևի ձանձրացել ես, բարձրացրու ձայնը, եթե ուզում ես, ի՞նչ ես նայում»:

Հետս խոսելիս (բայց կարծես ինքն իր հետ էր խոսում) ձեռքը դրեց ոտքիս, դա շոյանքի նախերգանք էր, որը չէր շարունակվելու, հետո ձեռքը հետ քաշեց, որպեսզի վերադառնա իր նախկին դիրքին՝ մեջքի վրա, ապա կծկվեց աղջնակի կամ իր երեխայի պես, որն այդպես էլ ոչինչ չհասկանալով՝ քնել էր իր սենյակում, հավանաբար՝ օրորոցում, ես չգիտեմ՝ համարյա երկու տարեկան երեխաների դեպքում դեռ վտանգ կա՞, որ ընկնելու են մահճակալից, թե՞ քնում են մեծի պես, երևի դրա համար են օրորոցում պառկեցնում, որպեսզի ապահով լինեն. «Ֆրեդ Մաքմուրեյի հին ֆիլմերից է,– պատասխանեցի (նա տարիքով ինձնից փոքր էր. ինքս ինձ հարց տվեցի՝ տեսնես Մաքմուրեյին գիտի՞),– բայց չեմ նայում»: Ամուսինը նույնպես բանից անտեղյակ քնած էր Լոնդոնում՝ անտեղյակ նրանից և իմ գոյությունից, բայց ինչո՞ւ տագնապով չէր արթնացել, ինչո՞ւ չէր կանխագգացել, ինչո՞ւ չէր զանգում Մադրիդի իր տուն՝ մխիթարվելու, որպեսզի իր տագնապը մի ուրիշ՝ ավելի մեծ տագնապի խառներ ու ազատվեր այդ զգացումից, ինչո՞ւ ինքն իրեն չէր փրկում: Սակայն կեսգիշերը խաղաղ էր բոլորի համար, նույնիսկ վերջին լուրերին անտեղյակների. շատ մոտ՝ նույն հարկի տակ ապրող անտեղյակ որդու և հեռվում գտնվող հոր համար, կղզում, որտեղ սովորաբար հանգիստ քնում էր, հարսների կամ քույրերի համար, որոնք հավանաբար երազում էին վերացական ապագայի մասին այս անշարժ քաղաքում, որտեղ դժվար է քնել (ավելի շուտ հոգնածությունից, քան սովորությունից), ոմն հոգնած և ուժասպառ բժշկի համար, որը գուցե մի կյանք էլ փրկեր, եթե այդ գիշեր նրան մղձավանջից արթնացրած լինեին, այդ շենքի հարևանների համար, որոնք քնի մեջ հուսահատվելու էին՝ մտածելով հաջորդ առավոտվա մասին, որը գալիս է անխուսափելիորեն, և

գնալով ավելի քիչ ժամանակ է մնում արթնանալու, հայելու մեջ նայելու, ատամները մաքրելու և ռադիոն միացնելու համար. ևս մեկ օր, իհնչ դժբախտություն, ևս մեկ օր, իհնչ բախտավորություն: Միայն իմ և Մարտայի համար ամեն ինչ կարգին չէր, քանզի ոչ անտեղյակ էի, ոչ էլ քնի մեջ ընկղմված, և արդեն շատ ուշ էր. առաջ ասում էի, որ ամեն ինչ շատ արագ եղավ, և իսկապես, բայց հիշելիս դանդաղում է, կարծես նորից դրա մասնակիցը լինես, այնպիսի զգացողություն ունեի, որ ժամանակն արագ է անցնում, մինչդեռ ժամացույցն ուրիշ բան էր ասում (մեկը՝ Մարտայի մահճակալի զարդասեղանին, մյուսը՝ դաստակիս), ես ուզում էի՝ հնարավորինս դանդաղ անցներ, բայց ոչ, իմ ամեն արտահայտությունից կամ շարժումից մինչև մյուսի անցումը մեկ րոպե էր ձգվում, մինչդեռ ինձ տասը կամ առնվազն հինգն էր թվում: Քաղաքի մյուս ծայրերում ամեն ինչ երևի կարգին էր կամ կարգին չէր. որոշակի հեռավորությունից լսվում էին մեքենաների ձայներ, Կոնդե դե լա Սիմերա անունով փողոցը փոքր-ինչ հեռու էր ակտիվ երթևեկությունից, գիտեի, որ մոտերքում «Լա Լուս» հիվանդանոցն էր, որտեղ հերթապահ բուժքույրերը, համազգեստներին սազական սպիտակավուն գուլպաներ հագած, անհարմար աթոռներին խաչած ոտքերով և գլուխները բռնոցքներին հենած, ննջում էին՝ թեթև նինջ, որը կարող էր ցանկացած պահի խախտվել, մինչդեռ այդտեղից անդին, ակնոցով մի ուսանող հավանաբար իրավաբանության կամ ֆիզիկայի, կամ դեղագործության առարկաների կանոններն էր սերտում վաղվա անիմաստ քննության համար, բայց որոնք լսարանից դուրս գալուն պես մոռանալու էր հաստատ, ավելի հեռվում՝ մեկ այլ տեղում, Բեկկեր եղբայրների սարավանջի վերջում, ամեն դանդաղող կամ լուսացույցը հարգող մեքենայի հետ

բոլորից մեկուսացած մի պոռնիկ՝ հագին ցրտաշունչ երեքշաբթի գիշերվա լավագույն շորերը, երեք-չորս սպասողական և անվստահ քայլերով մոտենում էր ճանապարհին, որպեսզի շատ մոտիկից կամ դեռ հեռվից նկատվի, որը գուցե տղամարդ է, երիտասարդ, որը անսովորությունից կամ հիվանդությունից, կամ հոգնածությունից դրդված, մայթեզրով մի կերպ քարշ է տալիս բարձրակրունկները, հետո խցկվում է օտար մեկի մեքենայի հետնամասը, որտեղ այնքան է եղել, որ կորցրել է թիվն ու հաշիվը: Ինչ-որ տեղ սիրահար զույգեր հրաժեշտ են տալիս իրար, չեն ուզում բաժանվել, չեն ուզում անկողին մտնել միայնակ, դեռ դիմադրում են, զվարճանում՝ համբուրվելով արդեն բաց դռան առաջ (կամ տղան է հեռանում, կամ աղջիկը), սպասելով վերելակին, որը դիսկոտեկից վերադարձած գիշերաշրջիկ բնակիչների վերադարձից հետո արդեն մեկ ժամ է՝ ոչ ոք չի կանչել, մնացողի դռան առաջ գնացողի համբույրները նույնն են, ինչ երեկ չէ առաջին օրը և վաղը չէ մյուս օրը, իսկ առաջին առագաստի հիշարժան գիշերն անցել գնացել է վաղուց՝ կուլ գնալով շաբաթներիս, իրար հաջորդող ամիսներիս, իսկ մի ուրիշ տեղ կռվում են, ինչ-որ շիշ թռչում է օդում կամ հանգրվանում մեկի ձեռքում (մեկը բռնում է շի վզից, ինչպես դաշույնի սուր սայրը), թռչում է մեկի սեղանի ուղղությամբ, բայց ոչ թե շիշն է կոտրվում, այլ ապակե տարան, և գարեջրի շի փրփուրը մեզի պես հոսում է վար, ինչ-որ տեղ տեղի է ունենում սպանություն, գուցե ոչ միտումնավոր, քանզի ծրագրված չէ, այն պարզապես տեղի է ունենում, վեճ ու հարված, ապա բղավոց, և ինչ-որ բան պոռթկում է, բացահայտում կամ խաբկանքի հանկարծահաս գիտակցում, երբ հանկարծ իմանում են, լսում, ճանաչում կամ տեսնում, մահը երբեմն արտահայտվում է հաստատական եղանակի

բայերով՝ ակնարկելով գործողության ակտիվ մասնակցություն, մինչդեռ չիմացությունն ու ատելությունը օգնում են խուսանավել փորձանքից, հետևաբար լավագույն պատասխանը հետևյալն է. «Չգիտեմ, վստահ չեմ, դեռ կտեսնենք»: Տեսնելու համար սպասել է պետք, քանզի ոչ ոք ոչինչ չգիտի, նույնիսկ այն, ինչ անում ես կամ որոշում, կամ տեսնում ես, կամ ինչից տառապում, ամեն բան վաղ թե ուշ տարրալուծվում է անիրականության մեջ, որը գնալով մեծանում է, ամեն բան ցնդում է անցնող օրերի հետ, նույնիսկ վայրկյանները, որոնք կարծում ենք, թե հավերժ են, իրականում անէանում են. բուժքրոջ թեթև նիսջը և ուսանողի ծույլ արթնությունը, անհաստատ ու երերուն քայլերն այն պոռնիկի, որը գուցե ծպտված հիվանդոտ պատանի է, սիրեցյալների դավաճան համբույրները, որոնք մի քանի ամիս կամ շաբաթ հետո մոռացության կմատնվեն, մի վերջին գիշեր, մի վերջին թեթև, բայց դառը մնաս բարով, հետո փշրված տարան կփոխեն նորով, գիշերվա վեճը կցրվի ծխի պես, թեև կովողը էլի կկռվի, միտումնավոր լինի սպանությունը, թե ոչ՝ սոսկ կդասվի մյուս հանցագործությունների թվին, այդպիսիք շատ կան՝ արդեն մոռացված հանցագործություններ, որոնց մասին արձանագրություն չկա, և դիտավորյալ հանցագործություններ, որոնց մասին նույնիսկ եթե արձանագրություն լինի, ապացուցել դժվար կլինի: Թե՛ Լոնդոնում, թե՛ ամբողջ աշխարհում տեղի կունենան այնպիսի բաներ, որոնց մասին ոչ ես, ոչ էլ Մարտան երբեք չենք իմանա և դրանով մենք կնամանվենք իրար, և այնտեղ՝ մի ժամվա տարբերությամբ այդ կղզում քնած նրա ամուսինը գուցե նույնպես քնած չէ, փոխարենը արթմնի ժամանակ է սպանում՝ «Վիլբրահամ հոթելի» ձմեռային պատուհանից նայելով դիմացի շենքերին կամ նույն հյուրանոցի մյուս

սենյակներին, «Վիլբրահամ փելեսի» ուղղանկյունաձև շենքի հետնամասի երկու թևերին, որոնք փողոցից չեն երևում և հիմնականում թաղված են մթության մեջ, նայում է այն սենյակին, որտեղ կեսօրին տեսավ այն սևամորթ սպասուհուն, որը նորեկների համար հարդարում էր արդեն մեկնած այցելուների մահճակալները, կամ գուցե նայում է ամենաբարձր հարկի՝ անօթևան աշխատակիցների համար նախատեսված ամենանեղ ու ցածր առաստաղով սենյակներից մեկին, որի տիրուհին հերթափոխից հետո հանում է գլխարկը, կոշիկները, գուպաները, գոգնոցն ու համազգեստը, լվացարանում լվանում դեմքն ու թևատակերը, տեսնում է մի կիսամերկ կնոջ, որին, ի տարբերություն ինձ, նա չի դիպել, չի գրկել, ոչ մի կապ չունի նրա հետ, որը քնելուց առաջ կռացած բրիտանական ձևով լվանում է որոշ մասերն այն թշվառ լոգարանում, որոնց բնակիչները պետք է դուրս գան միջանցք, եթե ուզում են օգտվել այդ հարկում գործող միակ ընդհանուր լոգարանից: Ես չգիտեմ և գուցե երբեք էլ չեմ իմանա, և մահացած Մարտան երբեք չի իմանա, թե այդ գիշեր իր ամուսինն ինչ էր անում Լոնդոնում, երբ ինքը մեռնում էր իմ կողքին. երբ ամուսինը վերադառնա, Մարտան այլևս չի կարողանա լսել նրան, չի լսի այն պատմությունը, որը նա որոշել էր պատմել, թեկուզ հորինված: Ամեն ինչ տարրալուծվում է, անէանում, քիչ բան կա, որ հետք է թողնում, հատկապես եթե չի կրկնվում, եթե լինում է գեթ մեկ անգամ և վերջ, ոչինչ, ոչինչ հետք չի թողնում: Բայց այն ժամանակ ես դեռ չգիտեի ինչ անուն տալ այդ գիշեր Կոնդե դե լա Սիմերա կատարած իմ առաջին այցին. տարօրինակ փողոց, մտադիր էի հեռանալ և այլևս չվերադառնալ այնտեղ, անիծյալ բախտ, բայց գուցե վաղը վերադառնամ, եթե ապավինենք ժամացույցին, ապա արդեն այսօր, և այլևս կարևոր չէ՝

կվերադառնամ, թե ոչ, քանզի իմ գնալուց հետո այս և գուցե միակ գիշերվանից հետք անգամ չի մնա, և նոր օր կսկսվի: «Վաղը այստեղ ինձնից նույնիսկ հետք չի մնա, – մտածեցի ես, – երբ Մարտան կազդուրվի, ուշքի գա, կլվանա մեր ընթրիքից մնացած ամանները, կարդուկի կիսաշրջագգեստը, թափ կտա սավանները, նույնիսկ նրանք, որոնց վրա ես չեմ պառկել, և անգամ չի հիշի եղածը: Կհիշի Լոնդոնում ապաստանած ամուսնուն, կուզենա, որ նա վերադառնա, և մինչ աշխարհը կվերադառնա իր կարգուկանոնին, Մարտան, երեկվա ծխախոտի մնացուկներով լի մոխրամանը ձեռքին, մի պահ կնայի պատուհանից, և նրա աչքերում բուն դրած մտահոգությունը իմ տված քիչ համբույրների և հուշերի հետ կամաց-կամաց կցնդի՝ տեղի տալով լոկ հիշողության, գայթակղության, տագնապի կամ վախի, կամ զղջման զգացումներին: Այստեղի իմ այդքան իրական ներկայությունից անգամ նշույլ չի մնա, երբ վաղը Մարտան գլխի բացասական մի շարժումով և բացվող ծորակի ջրով կմաքրի այն, կարծես չեմ էլ եղել, որովհետև ամեն ինչն էլ անցնում է, նույնիսկ ժամանակը, երբ թվում է՝ կանգ է առել. ջուրն ամեն ինչ կմաքրի-կտանի, բավական է վաղը գա, և ինքս էլ ինձ այլևս չեմ պատկերացնի այդ տանը, գուցե շատ շուտով դուրս գամ՝ գիշերով քայլելու Ռեյնա Վիկտորյա, մի քիչ էլ՝ գեներալ Ռոդրիգոյի փողոցներով, որպեսզի նախքան տաքսի նստելը մի քիչ անջատվեմ: Գուցե ճիշտ կլինի, որ Մարտան քնի, այդ դեպքում ես պատճառ և արդարացում կունենամ հեռանալու համար»: Սենյակի դուռը հանկարծ բացվեց. Մարտան կիսաբաց էր թողել, որ եթե երեխան արթնանար և լաց լիներ, ինքը լսեր: «Ինչ էլ լինի՝ չի արթնանա, – ասել էր ինձ, – բայց այսպես ինձ ավելի հանգիստ եմ զգում»: Դռանը հենվելով՝ տեսա իրենից անբաժան գաճաճ

Նապաստակով, ծծակով ու գիշերազգեստով տղային, որն արթնացել էր առանց լացի, երևի բնագդաբար զգացել էր իր աշխարհի կործանումը: Նայում էր մորը, հետո՝ ինձ, բայց դեռ լիովին չէր արթնացել մանկան երազներից, և իր կիսատ-պռատ թոթովանքներից ոչինչ չկար: Մարտան նրան չնկատեց (նրա աչքերն ու երկար թարթիչները սեղմված էին), թեև ես տագնապով արագորեն կոճկեցի վերնաշապիկս, որը չէի հասցրել հանել, բայց կոճակներն արձակել էի (չափից շատ էին կոճակները թե այն ժամանակ, թե հիմա): Մարտա Տեյլեսը երևի իրեն շատ վատ էր զգում, եթե գիշերվա կեսին չնկատեց որդու ներկայությունն իր սենյակում կամ գոնե չկռահեց, քանզի նրա կողմը չնայեց. ոչ մի տեղ չէր նայում: Մի քանի վայրկյան չէի կողմնորոշվում, թե ինչ էր լինելու, երեխան գոռգոռալով բարձրանալով՝ էր մահճակալին՝ պառկելու հիվանդ մոր կողքին, թե՞ աղիողորմ լաց էր լինելու նրա ուշադրությունը գրավելու համար (հիմա Մարտայի ուշադրությունը կենտրոնացած էր իր՝ ուր որ է հանգչող մարմնի վրա): Նայեց միացրած հեռուստացույցի կողմն ու տեսավ Մաքմուրեյին, որն ինչպես այլ, այնպես էլ այդ տեսարանում խաղում էր չար ու տհաճ դեմքով Բարբարա Ստենվիկի հետ: Նա երևի հիասթափվեց սև-սպիտակից կամ ձայնի բացակայությունից, կամ Տինտինի ու Հեդդոքի, կամ մուլտֆիլմի այլ հերոսների փոխարեն Մաքմուրեյին և Ստենվիկին տեսնելուց, որովհետև հայացքը մնաց անփոփոխ, ինչպես մյուս երեխաներինը, երբ նայում են էկրանին, և իսկույն շրջվեց Մարտայի կողմը: Ես շիկնեցի այն մտքից, որ ինքս եմ մեղավոր, որ նա իր մորը կիսամերկ է տեսնում (բավական մերկ, կրծկալը՝ ընկած, իսկ նա ոչինչ չէր անում ծածկվելու համար), չնայած գուցե երեխան սովոր էր, շատ փոքր էր, դժվար թե ծնողներն ամաչեին նրանից, և

բացի այդ, ծնողներ կան, որոնք ճիշտ և նորմալ են համարում իրենց երեխաների աչքի առաջ մերկ շրջելը, մանավանդ երբ նրանք դեռ շատ փոքր են: Բայց ես շիկնեցի չափից դուրս ժամանակակից այդ մտքից, և կրծկալը լաթի պես ծուլորեն վերցրի վերմակի վրայից՝ փորձելով գոնե փոքր-ինչ ծածկել տիրուհու կուրծքը: Բայց չարեցի, որովհետև հասկացա, որ այդ շարժումից կամ մաշկի հետ գործվածքի շփումից Մարտան կարթնանա, եթե քնած է, իսկ եթե քնած չէ, ապա կբացի աչքերը. մտածեցի, որ ավելի լավ կլինի, եթե չիմանա, որ երեխան մեզ տեսել է այդ վիճակում (միայն թե լաց չլիներ, մահճակալին չբարձրանար կամ որևէ բան չասեր): Նրա օրորոցը երևի առանց ձողերի էր կամ շատ ցածր ձողերով, այնքան բարձր, որ քնած ժամանակ ցած չէր գլորվի, բայց և այնքան ցածր, որ պետք եղած դեպքում կարող էր իջնել: Մի քանի վայրկյան մնացի փոքր չափի կրծկալը հաղթական գավաթի պես ձեռքիս բռնած, դրանով կարծես ուզում էի ընդգծել նվաճածս, բայց որն իրականում նվաճում չէր, ընդհակառակը, այդ պահին հասկացա, որ դա իմ ու նրա քմահաճույքի և տապալման ապացույցն էր: Տղան բաց աչքերով արթուն կանգնած էր դռան շեմին, թեև ինձ թվաց՝ համարյա քնած էր: Նայեց ձեռքումս պահած կրծկալին, որը ես իսկույն թաքցրի և բռիս մեջ սեղմելով՝ թիկունքից գցեցի ծածկոցին. դժվար ինձ ճանաչեց, թեև իմ դեմքը շատ չէր տարբերվում իր սուլտֆիլմի հերոսներից կամ երազում տեսած շներից, միայն թե անունս չգիտեր կամ գուցե գիտեր, ընթրիքի ընթացքում Մարտան մի քանի անգամ արտասանել էր անունս, բայց երևի չէր հիշում, որովհետև այդ ժամանակ կիսաքուն էր: Ոչինչ չասաց, աչքերը նույնպես ոչինչ չէին ասում, ուզում եմ ասել՝ հասկանալի ոչինչ չկար, հասուն մարդկանց հատուկ տարակուսանքի, պատրանքի,

վախի, անտարբերության, շփոթմունքի, զայրույթի և ոչ մի նշան, մինչդեռ իմ կարծիքով պատճառը քնկոտությունն էր: Զգուշորեն վեր կացա և թեթև ժպիտով ու շշուկով դանդաղ մոտեցանրան. «Էուխենիո, գնա քնելու, արդեն շատ ուշ է: Դե, գնա քո սենյակը»: Իմ բարձրությունից մի ձեռքս դրեցի նրա ուսին (մյուսով դեռ պահում էի օգտագործված անձեռոցիկի պես կրծկալը): Նա թույլ տվեց դիպչել իրեն, իսկ հետո ձեռքը դրեց նախաբազկիս: Հետո հնազանդորեն շրջվեց, և ես տեսա, թե ինչպես հապշտապ ու փոքրիկ քայլերով անհետացավ դեպի իր սենյակը տանող միջանցքում: Մինչև մտնելը կանգ առավ և շրջվեց իմ կողմը, երևի սպասում էր, որ կուղեկցեմ իրեն, գուցե իր քունը վկայող մեկի կարիքն ուներ՝ համոզվելու համար, որ ինչ-որ մեկը գիտի, թե ինքը որտեղ է քնած: Առանց աղմկելու (մատների ծայրերին, կոշիկներս դեռ հագիս, մտածեցի՝ էլ չեմ հանի) հետևեցի նրան և կանգնեցի այն սենյակի դռան մոտ, որտեղ նա քնում էր, և որտեղ մութ էր. երեխան լույսը չէր վառել, գուցե տեղը չգիտեր, թեև շերտավարագույրներն իջեցրած չէին, և գիշերվա դեղնավուն ու շիկացած լույսը ներս էր թափանցում պատուհանից: Համոզվելով, որ պատրաստվում եմ ուղեկցել իրեն, նապաստակի հետ վերադարձել էր իր օրորոց (փայտե օրորոց էր, ոչ մետաղյա, ինչպես ենթադրում էի՝ ցածր ձողերով): Կարծեմ՝ մի քանի րոպե մնացի այնտեղ, թեև չէի նայել ժամացույցին ոչ Մարտայի ննջասենյակից դուրս գալուց, ոչ էլ այնտեղ վերադառնալուց առաջ: Մնացի այնտեղ այնքան ժամանակ, մինչև համոզվեցի, որ երեխան նորից խոր քնեց. հասկացա նրա շնչառությունից, հետո մի պահ մոտեցա նրան, որպեսզի դեմքը տեսնեմ: Մոտենալիս գլխով հարվածեցի ինչ-որ բանի, որն ինձ չվնասեց, բայց կիսամթի մեջ տեսա առաստաղից՝ երեխային

անհասանելի լարերով կախած խաղալիք ինքնաթիռներ: Հետ քաշվեցի դեպի դռան շեմը և երեխայի պես պատին հենվելով՝ կանգնեցի անկյունում՝ չհամարձակվելով ոտք դնել նրա մոր սենյակը. աղոտ լույսի ներքո կարող էի նայել ինքնաթիռներին: Սովարաթղթից կամ մետաղից, կամ գուցե ներկած կտորներից պատրաստված լիքը, բայց և շատ հին ինքնաթիռներ էին, որոնք, անշուշտ, մնացել էին Լոնդոնում գտնվող նրա հոր հեռավոր մանկությունից, որը երևի սպասել էր մինչև տղա ունենար և դրանք ի ցույց դնել տեղափոխելով երեխայի սենյակը: Ինձ թվաց՝ «Սփիթֆայրը», «Մեստերշմիր 109», «Նյուպորտ», «Քեմլ» մակնիշի ինքնաթիռներ էին, նաև «Միգ Առնետ», ինչպես մենք էինք անվանում քաղաքացիական պատերազմի ժամանակ օգտագործվող ռուսական ինքնաթիռները, ինչպես նաև ճապոնական «Միցուբիշի Ֆ-2» և «Լանկաստեր» կամ գուցե քթի ներքևի հատվածում ներկած և շնաձկան պես ժպտացող ծնոտներով «Մուսթանգ» մակնիշի ինքնաթիռներ, նաև «Տրիպլան», որը կարող էր նաև «Ֆոկկեր» լինել՝ գուցեև կարմիր, այդ դեպքում կարող էր բարոն Ֆոն Ռիխտոֆենի ինքնաթիռը լինել. դրանք Առաջին և երկրորդ համաշխարհային պատերազմների ժամանակ կիրառված ռազմական ու ռմբակոծիչ ինքնաթիռներ էին, մի քանիսը՝ մեր երկրի արտադրության, մի քանիսը՝ Կորեայի, երեխա ժամանակ ես էլ դրանցից ունեի, ոչ այդքան իհարկե, այ թե նախանձն եմ, ահա թե ինչու դրանք ճանաչեցի նույնիսկ դեղնակարմիր լույսի տակ, ինչպես որ կճանաչեի մանուկ ժամանակ, եթե թռիչքի պահին տեսնեի: Ես ձեռքով կանգնեցրել էի ինքնաթիռը, որը դեռ ճոճվում էր. մտածեցի բացել պատուհանը, փակ էր, չէր կարող քամի լինել և շարժել նրանց, չէին ճոճվում, թեև փոքր-ինչ տատանվում էին (թեթև, իներտ կամ

գուցե մոգական քամի), այդպես տատանվում են թելից կախված թեթև բաները, կարծես քնած երեխայի գլխավերևում ուր որ է դուրս էին գալու գիշերային մարտի՜ փոքրիկ, ուրվականային և անհնարին մարտի, բայց որը, այնուհանդերձ, բազում անգամներ տեղի էր ունեցել անցյալում կամ գուցե ժամանակավրեպ ձևով ամեն գիշեր, երբ երեխան, ամուսինը և Մարտան քնում են և երազում տեսնում իրար: «Վաղը մարտի դաշտում հիշիր ինձ»,– մտածեցի ես. ավելի ճիշտ՝ հիշեցի:

ԽԱՎԻԵՐ ՄԱՐԻԱՍ
ՎԱՂԸ ՄԱՐՏԻ ԴԱՇՏՈՒՄ ՀԻՇԻՐ ԻՆՁ

JAVIER MARIÁS
MAÑANA EN LA BATALLA PIENSA EN MI

Թարգմանիչ՝ Ռուզաննա Պետրոսյան
Խմբագիր՝ Արքմենիկ Նիկողոսյան

Հրատ. բաժնի ղեկավար՝ Հռիփսիմե Մադոյան
Տեխն. խմբագիր՝ Արարատ Թովմասյան
Սրբագրիչ՝ Լիանա Չոբանյան
Էջադրող՝ Նարինե Հովհաննիսյան
Շապիկը՝ Սարգիս Անտոնյանի
Կազմի ձևավորումը՝ Վիտալի Ասրիևի



Անտարես

«Անտարես» հրատարակչատուն
ՀՀ, Երևան-0009, Մաշտոցի պ. 50ա/1
Հեռ.՝ (+374 10) 58 10 59
antares@antares.am
www.antares.am